ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

28 մարտի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

44
(2710)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 169

Eduard Aghajanyan / Էդուարդ Աղաջանյան
November 4, 2019

Այսօր Շրջակա Միջավայրի նախարար Էրիկ Գրիգորյանի հետ քննարկել ենք Նորք Մարաշ վարչական շրջանի և Սարի Թաղի հատման կետում գտնվող ամայի տարածքների անտառապատման հնարավորությունները:

Բոլորդ հավանաբար տեղյակ եք, որ մինչ 90-ականներ այս տեղում սաղարթախիտ անտառ էր, որն էլ երևանցիները կոչում էին «Երևանի Թոքեր»: Եվ ահա, ուրախ եմ արձանագրել, որ «Երևանի Թոքեր»-ի վերականգնման աշխատանքները շուտով կսկսվեն:

Ըստ պայմանավորվածության՝ այսօր շրջանառության մեջ կդրվի սույն նախագծի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար նախարարությանը գումար հատկացնելու մասին կառավարության որոշման նախագիծ, որով կգնահատվեն տվյալ տարածքում կաթիլային համակարգի ներդրման հնարավորությունն ու դրա ֆինանսական գնահատականը:

Ի դեպ, այս որոշումը պետք է դիտարկել, որպես ՀՀ վարչապետի կողմից հայտարարված 2020 թ.-ին 10 միլիոն ծառերի տնկման ծրագրի մաս:

#Հստակ_քայլերով
#ArmGov See less

2019թ.-ի նոյեմբերին կառավարության նիստի ժամանակ հայտարարվեց, որ Նորքի անտառներում կաթիլային ոռոգման համակարգ կներդրվի: Այդ ժամանակ կառավարությունը 6 մլն դրամ էր հատկացրել Շրջակա միջավայրի նախարարությանը, եւ Երեւանում՝ 45 հեկտար տարածքում, կաթիլային ոռոգման համակարգի ներդրման համար սկսվեց նախագծանախահաշվային աշխատանքներ: Այդ նույն տարվա ընթացքում վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, թե սկսում են Նորքի անտառի վերականգնման գործընթացը՝ կիսվելով այդ ժամանակ իր աշխատակազմի ղեկավար Էդուարդ Աղաջանյանի գրառմամբ, որն ուրախությամբ արձանագրել էր, որ «Երեւանի թոքերի» վերականգնման աշխատանքները շուտով կսկսվեն: «Փաստերի ստուգման հարթակ»-ը պարզել է, որ այս խոստումներից երեք տարի անց, ծառերի փոխարեն, այդտեղ շինարարություն է: Նորքի լանջին որեւէ վերականգնման աշխատանք կատարված չէ, փոխարենը անտառի կարգավիճակից դուրս մնացած տարածքը վերածվել է հսկայական շինհրապարակի: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ 3 տարուց ավելի խոստացված Նորքի անտառն այդպես էլ չի վերականգնվել, թեեւ ՇՄՆ անտառային կոմիտեից հույս են հայտնում, որ, 2022թ.-ին հաստատված պլանով, այն դեռ նախատեսվում է վերականգնել:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ երեկ առավոտյան խորհրդարան է եկել ռուսաստանաբնակ հայ օլիգարխ Ռուբեն Գրիգորյանը՝ Ռուբեն Ցոլակիչը, որը նաեւ Մոսկվայի հայկական եւ ժողովուրդների մշակույթների թանգարանի հիմնադիրն է: Թե որն էր նրա՝ ԱԺ գալու պատճառը, «Ժողովուրդ»-ին հաջողվեց պարզել. վերջինս ԱԺ-ում հանդիպել է ՔՊ խմբակցության պատգամավոր Վաղարշակ Հակոբյանի հետ: Մեր տեղեկություններով՝ Հակոբյանի եւ Գրիգորյանի հանդիպումը բավականին երկար է տեւել: Հանդիպումից անմիջապես հետո Ռուբեն Գրիգորյանը հեռացել է խորհրդարանից, այլ հանդիպումների չի մասնակցել:

ՔՊ խմբակցության պատգամավոր Արսեն Թորոսյանը խուսափում է թիմակիցների ու Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպումներից: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Թորոսյանը չի մասնակցել ՔՊ վարչության վերջին նիստին, որը երեքշաբթի՝ մարտի 21-ին է տեղի ունեցել: Հիշեցնենք, որ նույն օրը ԱԺ-ում նախատեսված էր նաեւ ՄԻՊ թեկնածու Անահիտ Մանասյանի եւ ՔՊ-ական պատգամավորների հանդիպումը: Թորոսյանը, սակայն, այս հանդիպմանն էլ չի մասնակցել: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ՔՊ աշխատակազմի ղեկավար Արուսյակ Մանավազյանը հաստատեց, որ Արսեն Թորոսյանը չի մասնակցել վարչության վերջին նիստին, պատճառների մասին, սակայն, նա չցանկացավ խոսել. «Վարչության նիստին չի եղել, բայց պատճառը որքանո՞վ է էական: Նախ՝ միայն ինքը չէ, որ բացակա է եղել: Պատգամավորները մասնակցել են խմբակցության նիստին, նաեւ այդ օրը եղել է վարչության նիստ, իսկ նիստերին բացականեր լինում են. մեկը գործուղման է լինում, կարող է նույն օրը ֆրակցիայում նիստ լինի»,-ասաց Մանավազյանը: Մեր տեղեկություններով, սակայն, Արսեն Թորոսյանն այդ օրը խմբակցության նիստին էլ չի մասնակցել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ խնդիրն այն է, որ իրավապահ համակարգը վերջերս Փաշինյանին այնպիսի փաստեր է ներկայացրել Թորոսյանի մասով, որոնք, ըստ էության, ապացուցել են իր առնչությունը առողջապահության ոլորտում իր պաշտոնավարման ժամանակ թույլ տված կոռուպցիոն չարաշահումների գործում: Այս առիթով «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց մեկնաբանություն ստանալ նաեւ Թորոսյանից, սակայն վերջինս, լսելով որ «Ժողովուրդ» օրաթերթից է, հարցը նույնիսկ չլսեց մինչեւ վերջ՝ ասելով, որ չի ցանկանում խոսել: «Ժողովուրդ» օրաթերթը բազմիցս է գրել, որ կոռուպցիոն այդ բացահայտումներից հետո Փաշինյանի ու Թորոսյանի հարաբերությունները լարվել են: Նիկոլ Փաշինյանը խիստ է տրամադրված այս հարցում, ՔՊ-ականներին ասել է, որ սպասում է նախաքննության ավարտին, որից հետո որոշում կկայացնի Թորոսյանի մասով:

Ուշագրավ իրավիճակ՝ Գլխավոր դատախազությունում: Ինչպես հայտնի է, գլխավոր դատախազի տեղակալ Անահիտ Մանասյանը պատրաստվում է գնալ ՄԻՊ, եւ նրա տեղը թափուր է մնում: ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Արթուր Պողոսյանը փորձում է ԱԱԾ-ից իր հավատարիմ գործընկերներից նշանակել Մանասյանի տեղը: Իսկ ո՞ւմ մասին է խոսքը, որին փորձում է նշանակել գլխավոր դատախազի տեղակալի տեղը: Պարզվում է՝ խոսքը, ոչ ավել, ոչ պակաս, ՀՔԾ-ում (ներկայումս վերափոխված Հակակոռուպցիոն կոմիտեում) «Մարտի 1»-ի քրեական գործով, «Սասնա ծռերի» դեպքերով լրագրողներին հարցաքննած եւ քաղաքական իշխանության հրահանգով «Մարտի 1»-ի գործով «Ժողովուրդ» օրաթերթի լրագրողի հեռախոսային խոսակցությունները ապօրինի կերպով գաղտնալսած քննիչ Վազգեն Ավետիսյանի մասին է: Նա հեղափոխությունից հետո տեղափոխվել էր ԱԱԾ եւ նշանակվել ԱԱԾ քննչական դեպարտամենտի պետի տեղակալ, իսկ ավելի ուշ նշանակվեց ՀՀ գլխավոր դատախազության՝ պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ: Եվ, ահա, նրան դատախազի տեղակալ Պողոսյանը փորձում է նշանակել գլխավոր դատախազի տեղակալ, սակայն փորձերը չեն ստացվում, քանի որ նշանակմանը դեմ է գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը:

ԱՊԱՏԻԱ

ԻՆՉՈ՞Ւ ԵՆՔ ՉԱՐՄԱՆՈՒՄ

Ինչպես արդեն հայտնի է, Շիրակի մարզի Անի եւ Սյունիքի մարզի Սիսիան համայնքներում մարտի 26-ին կայացած ՏԻՄ ընտրություններում հաղթել է իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը:

Սիսիան համայնքում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ստացել է 7325 ձայն, Հայաստանի հանրապետական կուսակցությունը ստացել է 2553 ձայն, իսկ «Քաղաքացու որոշում» կուսակցությունը ստացել է 1443 քվե:

Անի համայնքում ՔՊ-ն ստացել է 5180 քվե, 3134 քվե ստացել է «Ազգ-համայնք» կուսակցությունների դաշինքը, «Հայկական երազանք» կուսակցությունը ստացել է 795, իսկ «Իմ հզոր համայնք» կուսակցությունը՝ 744 ձայն:

ArmLur.am-ը ընտրության արդյունքների վերաբերյալ զրուցել է քաղտեխնոլոգ Վիգեն Հակոբյանի հետ:

-Պարոն Հակոբյան, ինչպե՞ս կգնահատեք ընտրության արդյունքները, սպասելի՞ էին դրանք:

-ՏԻՄ ընտրությունների արդյունքներն անսպասելի չէին: Այն վարքագիծը, որը դրսեւորում է մեր ժողովրդի մի հատվածը, ինչպես նաեւ այն բանից հետո, երբ 2021թ.-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքում գործող վարչախումբը վերընտրվեց, դրանից հետո դժվար է զարմանալ: 2021թ.-ին դեռ պատերազմի հետքերը թարմ էին, դժգոհության մեծ ֆոն կար, բայց, այնուամենայնիվ, ընտրությունների արդյունքում իշխող ուժը վերընտրվեց:

Կարծում եմ՝ այսօրվա ապատիային, որը տիրում է Հայաստանում պատերազմում պարտությունից հետո, եւ մեր հանրության ոչ ռացիոնալ վարքագիծը, սրան եթե գումարենք իշխանության ավելի լկտիանալը, ապա այս ամենը լրիվ ապահովում է այն արդյունքը, որն ունենք:

Սրան գումարվում է նաեւ ընդդիմության պասիվությունը, քաղաքական դաշտում նրանց բացակայությունը, որը մեծ բացթողում է. այս պարագայում մարդիկ լուրջ այլընտրանք չունեին: Սրանով է նաեւ պայմանավորված, որ նույն Սիսիանում ընդմենը 49% է մասնակցել ՏԻՄ ընտրություններին: Բացի սա, Հայաստանում ՏԻՄ ընտրությունները երբեք քաղաքական չեն լինում իրենց բնույթով, քանի որ փոքր համայնքներում ընտրությունների ժամանակ ավելի շատ տեղական կլանների միջեւ պայքար է լինում. ով ավելի մեծ ցեղ է ունենում, շրջապատ է ունենում, նա էլ հաղթում է: Քաղաքական այն ուժերը, որոնք մասնակցում են ընտրություններին, միշտ պետք է հաշվի առնեն սա, որ ՏԻՄ ընտրություններին իրականում քաղաքացիներն իրենց հարցեր լուծող մարդ են ընտրում, ոչ թե քաղաքական ուժի ներկայացուցիչ: Ցանկացած քաղաքական ուժ պետք է սա հաշվի առնի ու ընտրությունների դուրս գա այնպիսի կազմով, որը բավարարում է հայաստանյան ՏԻՄ ընտրությունների պահանջին: Օրինակ՝ քաղաքապետի թեկնածուն պետք է լինի տեղի ժողովրդի համար շատ հասկանալի, ընկալելի, հարց լուծող, գումար ունեցող մեկը, որպեսզի, անկախ քաղաքական պատկանելիությունից, նա ընտրվի:

Շատ բաներ հաշվի չեն առնում, ստանդարտներով են առաջ գնում, դրա համար էլ գործող իշխանությունը կարողանում է հաղթել:

-Պարոն Հակոբյան, հատկապես տարօրինակ էր Սիսիանի ընտրության արդյունքները: Գիտենք, որ հենց այս իշխանության օրոք Սիսիանը դարձել է սահմանամերձ, թշնամին հաստատվել է Իշխանասարի եւ Սեւ լճի հատվածում. սրա մասին ի՞նչ կասեք:

-Այն, ինչ տեղի ունեցավ Սիսիանում, նույն տրամաբանության շարունակությունն է. եթե հիշում եք, խորհրդարանական ընտրությունների ժամանակ էլ Սյունիքում ՔՊ-ն հաղթել էր. ինչո՞ւ ենք հիմա զարմանում, որ Սիսիանում հաղթել են: Հիմա ուղղակի աշխատել է նաեւ իշխող ուժի մեծ հմտությունը՝ ընտրություններում վարչական ռեսուրս օգտագործելու, ինչ-որ տեղ ընտրակաշառք բաժանելու հարցում. ես սա ասում եմ՝ հիմնվելով տարբեր հայտարարությունների վրա:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

Ի՞ՆՉ ԿԱՊ ՈՒՆԻ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՀԵՏ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ, մրցութային խորհրդի որոշման հիման վրա, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում առաջադրվել է Արամայիս Փաշինյանի թեկնածությունը: Չնայած նրա ազգանունը կարող է տարընթերցումների տեղիք տալ, սակայն մենք տեղեկացանք, որ նա որեւէ ազգակցական կապ չունի վարչապետի ընտանիքի հետ:

Համենայնդեպս, այդ մասին նրան հարց էին ուղղել նաեւ 2019 թվականի նոյեմբերին խորհրդարանում, երբ նա Բարձրագույն դատական խորհրդի կողմից էր առաջադրվել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի թեկնածու: Այդ ժամանակ նա նշել էր. «Երբեւէ չեմ հանդիպել, անձամբ որեւէ առնչություն չեմ ունեցել, չեմ զրուցել, նրա հետ որեւէ խոսակցություն չեմ ունեցել ո՛չ անձամբ, ո՛չ միջնորդավորված, երբեւէ նույն սենյակում չենք գտնվել պարոն Փաշինյանի հետ: Համենայնդեպս, ինձ հայտնի ազգակցական կապ չունեմ»:

ՆՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ

Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ ստեղծվել է Ընդերքօգտագործման ապօրինի դեպքերի հայտնաբերման նպատակով միջգերատեսչական աշխատանքային խումբ: Այսպիսով, ArmLur.am-ը տեղեկացավ, որ աշխատանքային խմբի ղեկավարը լինելու է ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության ընդերքօգտագործման ոլորտը համակարգող նախարարի տեղակալը:

Աշխատանքային խմբի կազմում են լինելու նաեւ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հողերի եւ ընդերքի քաղաքականության ոլորտը համակարգող նախարարի տեղակալը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատակից, ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ, ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի ընդերքի վերահսկողության ոլորտը համակարգող ղեկավարի տեղակալ եւ այլք:

Ընդ որում, միջգերատեսչական աշխատանքային խմբի ղեկավարը եռամսյա պարբերականությամբ պետք է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնի տեղեկատվություն աշխատանքային խմբի կատարած աշխատանքների իրականացման ընթացքի մասին:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԽԱՌՆՎԵԼ Է ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ԳՈՐԾԻՆ

ԲԴԽ նախկին նախագահ Գագիկ Ջհագիրյանի թոշակի գործին խառնվել է ֆինանսների նախարարությունը եւ դատարանի որոշմամբ ներգրավվել որպես երրորդ անձ: Իսկ ի՞նչ դատական գործի մասին է խոսքը: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Բարձրագույն դատական խորհրդի նախկին նախագահ Գագիկ Ջհանգիրյանը 2022 թվականի դեկտեմբերի 27-ին դատարան է ներկայացրել հայցադիմում՝ ընդդեմ ՀՀ միասնական սոցիալական ծառայության, եւ խնդրել է դատարանին պարտավորեցնել ՀՀ միասնական սոցիալական ծառայությանը ընդունել Գագիկ Վրեժի Ջհանգիրյանին դատախազի կենսաթոշակ նշանակելու մասին որոշումը:

Դրանով նա միեւնույն ժամանակ պահանջում է անվավեր ճանաչել ՀՀ միասնական սոցիալական ծառայության գլխավոր քարտուղարի՝ 05.12.2022 թվականի գրությունը եւ 04.10.2022 թվականի որոշումը, որով Գագիկ Ջհանգիրյանին կենսաթոշակ չէին նշանակել:

Ասել է թե՝ ՀՀ միասնական սոցիալական ծառայությունը հրաժարվել է ԲԴԽ նախկին նախագահին դատախազի կենսաթոշակ նշանակել, եւ հիմա նա դատարանով է փորձում վերականգնել թոշակի իր իրավունքը:

ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ՀԱՄԱԲԵԼ

Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարությունը բացարձակապես անընդունելի է համարել Միջազգային քրեական դատարանի (ՄՔԴ) Հռոմի կանոնադրությանը միանալու Հայաստանի ծրագրերը՝ Հաագայի դատարանի կողմից ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի ձերբակալության որոշման ֆոնին: Այս մասին հայտնում է ՏԱՍՍ-ը՝ հղում անելով ՌԴ ԱԳՆ-ի աղբյուրին:

«Մոսկվայում բացարձակապես անընդունելի են համարում Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությանը պաշտոնական Երեւանի միանալու ծրագրերը՝ Ռուսաստանի ղեկավարության դեմ ՄՔԴ-ի վերջին անօրինական եւ իրավաբանորեն ոչինչ չարժեցող «օրդերների» ֆոնին»,- ասել է աղբյուրը:

Նա մանրամասնել է, որ Մոսկվան նախազգուշացրել է Երեւանին նման որոշման ծայրահեղ բացասական հետեւանքների մասին:

ԿԵՂԾ ԴԻՊԼՈՄՈՎ ԳՅՈՒՂԱՊԵՏ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Գագիկ Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա օգտագործել է իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հավաստող եւ իրավունք վերապահող կեղծ փաստաթուղթ, որպեսզի գործողություններն արտահայտվել են հետեւյալում. Գագիկ Սարգսյանը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված պահանջը, այն է՝ «1000-ից ավելի հաշվառված բնակիչ ունեցող բնակավայրի վարչական ղեկավարը պետք է ունենա բարձրագույն կրթություն» շրջանցելու նպատակով քննությամբ չպարզված հանգամանքներում եւ ժամանակահատվածում ձեռք է բերել Ռուսաստանի Դաշնության գյուղատնտեսության նախարարության «Բարձրագույն մասնագիտական կրթության Կ.Ա. Տիմիրյազեւի անվան ՄԳՏԱ-Ռուսաստանի պետական ագրարային համալսարան»-ի անվամբ 2002 թվականի հուլիսի 01-ին տրված N 3958784 սերիայի 83 գրանցման համարի կեղծ դիպլոմ, որով հավաստվել է բարձրագույն կրթություն ունենալու հանգամանքը, որից հետո այն օգտագործելու եղանակով դրել է փաստաթղթաշրջանառության մեջ եւ 2021 թվականի դեկտեմբերի 23-ին դիմումին կից ներկայացրել է Արտաշատ համայնքի ղեկավար Կառլեն Մկրտչյանին՝ խնդրելով իրեն նշանակել Արտաշատ համայնքի Մրգավետ բնակավայրի վարչական ղեկավար: Այնուհետեւ Կ. Մկրտչյանի՝ 2021 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1259-Ա որոշմամբ՝ Գագիկ Սարգսյանը նշանակվել եւ մինչ օրս հանդիսանում է Մրգավետ բնակավայրի վարչական ղեկավար:

ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ ՏՂԱՄԱՐԴՈՒՆ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Արթուր Ամոեւին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2022թ. ապրիլի 29-ին գտնվելով «Ռոսիա» տոնավաճառի հետնամասում՝ Երեւան քաղաքի Մովսես Խորենացու 36 հասցեում գործող «Վոյս» ակումբում, զանգահարել է իր ընկերոջը՝ Արթուր Մարգարյանին, եւ խնդրել գալ իր հետեւից: Վերջինս չի մերժել Ա. Ամոեւի խնդրանքը եւ նշված ակումբի հարակից տարածքից «Օպել» մակնիշի ավտոմեքենայով Ամոեւին տեղափոխել է Նոր Նորք վարչական շրջանի ուղղությամբ: Երեւան քաղաքի Սայաթ-Նովա 40 հասցեի մոտ Ա. Մարգարյանն Արթուր Ամոեւի պահանջով կանգնեցրել է ավտոմեքենան, որից հետո վերջինս, իջնելով ավտոմեքենայից, քայլել է դեպի Սայաթ-Նովա փողոցի 40 հասցեում գտնվող շենքի մոտ, որտեղ փակցված է եղել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պաստառը, եւ կարծելով, որ տվյալ շենքը հանդիսանում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության գրասենյակը, խուլիգանական մղումներով, սեփական անձի ենթադրյալ առավելությունն ընդգծելու մղումով տարված՝ Ա. Ամոեւն ուղղակի դիտավորությամբ կոպիտ կերպով խախտել է հասարակական կարգը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ անհարգալից վերաբերմունքով եւ զուգորդվել ուրիշի գույքը վնասելով:

ԱՌԱՋԽԱՂԱՅՈՒՄ

ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՂՄԸ ԲԱՆԱԿՑՈՒՄ Է

Ադրբեջանական մարտական դիրքերից կրակել են նռան այգում աշխատող բաղաքացիական անձանց ուղղությամբ. տուժածներ չկան, գյուղատնտեսական աշխատանքները դադարեցվել են. հայտնում է Արցախի ներքին գործերի նախարարությունը:

Ըստ հաղորդագրության՝ երեկ՝ ժամը 11:30-ին, Մարտակերտի շրջանի գլխավոր մասնագետ Ալյոշա Ջաքարյանը ոստիկանության շրջանային բաժնում հաղորդել է մարտի 26-ին Մարտակերտ քաղաքի վարչական տարածքում հակառակորդի կողմից իրենց ուղղությամբ անկանոն կրակոցներ արձակելու մասին:

Շաբաթ օրն էլ Ստեփանակերտը հաղորդեց, որ Շուշի-Լիսագոր հատվածում ադրբեջանական զինուժը խախտել է նոյեմբերի 9-ի փաստաթղթով ամրագրված շփման գիծը եւ որոշակի դիրքային առաջխաղացում է ապահովել Արցախի տարածքում:

Ռուսական կողմը եւս դա եռակողմ հայտարարության խախտում համարեց եւ պարզաբանեց՝ Ադրբեջանը հատել է շփման գիծը Շուշիի շրջանում, զբաղեցրել Սարըբաբա լեռից 2,9 կմ հյուսիս-արեւելք գտնվող բարձունքն ու սկսել դիրքի ինժեներային կահավորում: Ըստ Ստեփանակերտի՝ խաղաղապահներն այժմ բանակցություններ են վարում ադրբեջանական կողմի հետ նրանց ելման դիրքեր վերադարձնելու համար:

Այս մասին հայտնել է նաեւ Արցախի Ազգային ժողովի «Ազատ հայրենիք-ՔՄԴ» խմբակցության ղեկավար Արթուր Հարությունյանը՝ անդրադառնալով երկու օր առաջ Ադրբեջանի կողմից Շուշի-Լիսագոր հատվածում շփման գիծը խախտելու եւ դիրքային առաջխաղացում ապահովելուն: «Ադրբեջանը, ճնշումներ գործադրելով, փորձում է պարտադրված բանակցությունների կամ քաղաքական քննարկումների ֆոն ստեղծել: Միջազգային հանրության թողտվությամբ՝ Արցախի շրջափակման պայմաններում գործնական քայլեր չանելու պատճառով Ադրբեջանը շարունակում է իրականացնել իր որդեգրած քաղաքականությունը՝ ճնշումներ գործադրել եւ լիակատար շրջափակել Արցախը: Նման ճնշումներով գլոբալ առումով էթնիկ զտումներ ու նաեւ ցեղասպանության նախապատրաստման աշխատանքներ են իրականացնում, որ հասնեն իրենց նպատակներին: Բայց ճնշումների միջոցով չի ստացվելու իրականացնել այդ նպատակները, մենք չենք պատրաստվում այդ ճնշումների արդյունքում գնալ ինչ-որ զիջումների՝ «ինտեգրացիայի», չի կարող նման բան լինել», - նշում է նա: Արցախի իշխող ուժի պատգամավորն ընդգծում է՝ Հաագայի միջազգային դատարանի որոշման կատարման ապահովումը պետք է կատարի ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը, բայց մեկ ամսից ավելի է՝ Ադրբեջանը չի կատարում դատարանի պահանջները, եւ Արցախը շարունակում է շրջափակված մնալ:

Արցախի ԱԳՆ-ն երկու օր առաջ տարածած հաղորդագրության մեջ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդից պահանջում էր կոնկրետ քայլեր ձեռնարկել՝ ուղղված Լաչինի միջանցքի անհապաղ բացմանն ու Ադրբեջանի ցեղասպան քաղաքականության զսպմանը:

Արթուր Հարությունյանն ասում է՝ Ադրբեջանը միջազգային հանրության, մասնավորապես՝ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի կողմից գործնական քայլեր չանելուց է ոգեւորվում եւ շարունակում այնպիսի գործողություններ իրականացնել, որոնք տարածաշրջանում խաղաղությունն ու կայունությունը խաթարում են:

Իսկ ի՞նչ անել, եթե ՄԱԿ-ի անվտանգությանը խորհուրդը չի ապահովում դատարանի որոշման կատարումը. Արթուր Հարությունյանը հղում է անում 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությանը:

«Ռուսաստանի Դաշնությունը ռուս խաղաղապահների զորակազմի ներկայությամբ պետք է ապահովի եռակողմ հայտարարության կատարումը: Մենք հղում ենք անում թե՛ 2020 թվականի եռակողմ հայտարարությանը, թե՛ Հաագայի դատարանի որոշման կատարմանը. պետք է գործնական քայլեր ձեռնարկվեն, այլապես Ադրբեջանը շարունակելու է էթնիկ զտումների եւ ցեղասպանության քաղաքականությունը եւ հասնելու է իր նպատակին՝ հայաթափել Արցախը: Իսկ «ինտեգրացիայի» մասին խոսակցությունները միջազգային հանրության համար աչքակապություն են»,- հավելեց նա:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

3 ՕՐՈՎ ԱՄՆ–ՈՒՄ ԷՐ

Այս օրերին ՀՀ Ազգային ժողովի նախագահի տեղակալ Հակոբ Արշակյանը գտնվում էր ԱՄՆ-ում: ArmLur.am-ը տեղեկացավ, որ նա այնտեղ է գտնվել մարտի 24-26-ը:

Նա այնտեղ էր մեկնել՝ մասնակցելու Ամերիկայի Միացյալ Նահանգներում կայանալիք Համահայկական ֆուտբոլի երիտասարդական ասոցիացիայի տարեկան միջոցառմանը:

Նշվում է, թե գործուղման հետ կապված բոլոր ծախսերի վճարումը կատարում է հրավիրող կողմը:

ՀԱՅ–ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏ

ՀԱԷԿ-2 նախագծի շրջանակներում կայացել է կադրերի պատրաստման հարցերով հայ-ռուսական համատեղ աշխատանքային խմբի առաջին նիստը: Ռուսական պատվիրակությունը ղեկավարում էր ՀՀ-ում «Ռոսատոմ» պետկորպորացիայի ներկայացուցիչ Վ. Մ. Պրոշկինը: Հայկական կողմից նիստին մասնակցում էին նաեւ ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության, «Հայատոմ ԳՀԻ» ՓԲԸ, Հայաստանի Ազգային պոլիտեխնիկական համալսարանի ներկայացուցիչներ:

Փոխադարձ քննարկումների ընթացքում կողմերը կարեւորեցին ՀՀ ատոմային բնագավառի համար կադրերի պատրաստման առումով հայ-ռուսական փոխգործակցության ընդլայնմանն ու հետագա զարգացմանն ուղղված հարցերի համատեղ մշակումը, երկկողմանի առաջարկների դիտարկումն ու ընդգրկումը ներկայացված պլան-նախագծում, ինչպես նաեւ լրացուցիչ մասնագիտական կրթական ծրագրերին ուղղված հայկական կողմի պահանջարկների ուսումնասիրությունն ու դրանց իրականացումը Ռոսատոմի տեխնիկական ակադեմիայի եւ «Ռոսատոմ» ՊԿ գործընկեր բուհերի բազայի վրա:

Հանդիպման ավարտին ռուսական պատվիրակության ղեկավար Վ. Պրոշկինը համոզմունք հայտնեց, որ, ի տարբերություն այլ երկրների, Հայաստանում շատ նախագծեր հաջողվում է իրականացնել առավել արագ տեմպերով եւ մեծ արդյունավետությամբ՝ շնորհիվ մեծ նեղուժի՝ ի դեմս ոլորտային մասնագետների կրտսեր հետեւորդների:

ԱՄՆ–Ն «ՉԵՄՊԻՈՆ» Է

ԱՄՆ-ն վաղուց «չեմպիոն» է դարձել աշխարհի տարբեր մասերում սանձազերծված պատերազմների թվով եւ այլ պետությունների ինքնիշխանության խախտումներով. այս մասին հայտարարել է ՌԴ Անվտանգության խորհրդի քարտուղար Նիկոլայ Պատրուշեւը:

«Տեղին ու անտեղի Ժողովրդավարական կարգախոսներ հնչեցնելով՝ իրականում Վաշինգտոնը վաղուց արդեն չեմպիոն է դարձել պետությունների ինքնիշխանության խախտման, սանձազերծված պատերազմների ու հակամարտությունների թվի, այլ երկրների քաղաքացիների նկատմամբ կոպիտ ու անօրինական որսի առումով»,- ասել է նա Российская газетաին տված հարցազրույցում:

«Եթե ԱՄՆ-ն իսկապես որոշի շարժվել դեպի ժողովրդավարություն եւ դադարի նվաստացնել իր դաշնակից վասալներին, մենք դա միայն կողջունենք»,-հավելել է նա:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՄԻՋԱԴԵՊ՝ ՊԱՐԵԿՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԻՋԵՎ

ՀՀ ֆինչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային ֆինչական վարչությունում ֆինվող ֆրեական վարույթի շրջանակներում իրականացվում են ֆինչական եւ վարութային գործողություններ՝ նույն մարզում ոստիկանների օրինական ծառայողական գործունեությանը միջամտելու դեպքի հանգամանքները պարզելու ուղղությամբ:

2023 թվականի մարտի 24-ին ՊԾ Գեղարքունիքի մարզի ավագ պարեկի կողմից ներկայացված զեկուցագրի համաձայն՝ Ծովակ գյուղից մինչեւ Կարճաղբյուր գյուղ ընկած ճանապարհահատվածում ծառայություն իրականացնող պարեկները նույն օրը՝ ժամը 21:15-ի սահմաններում, նկատել են կայանված «Վազ 2114» մակնիշի ավտոմեքենա: Ելնելով կայանված դիրքից՝ վերջիններս, կարծելով, թե օգնության կարիք կա, մոտեցել են նշված ավտոմեքենային, որից իջել են երեք անձինք: Նրանցից մեկը՝ Գեղարքունիքի մարզի 29-ամյա բնակիչը, սկսել է հայհոյել պարեկային ծառայողներին, որից հետո վերջիններիս են մոտեցել նաեւ նույն մարզի 30 եւ 31-ամյա բնակիչները եւ նույնպես սկսել են հայհոյել: Այդ ընթացքում 31-ամյա տղամարդը քաշքշել ու հարվածել է պարեկներին, ինչպես նաեւ պոկել է նրանցից մեկին ամրակցված տեսախցիկը եւ փորձել պոկել մյուս ծառայակիցների տեսախցիկները, իսկ 29-ամյա տղամարդը ոտքով հարվածել է պարեկային ծառայության ավտոմեքենայի աջ հատվածին՝ վնասելով այն: Նշված գործողությունների ընթացքում պատռվել է պարեկներից մեկի հագին եղած ծառայողական լուսարձակող բաճկոնը:

Վերջիններիս կողմից կիրառվել է արցունքաբեր գազ, ֆիզիկական ուժ: 30 եւ 31-ամյա տղամարդիկ, հանցանք կատարելու մեջ հիմնավոր կասկածանքի հիմքով, ձերբակալվել են, իսկ 29-ամյա տղամարդը, ում ձեռքին եղել է մահակ, դիմել է փախուստի:

Դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակներում հիշյալ պարեկները տուժող են ճանաչվել եւ հարցաքննվել: Նշանակվել են դատաբժշկական փորձաքննություններ:

Միջնորդություն է ներկայացվել հսկող դատախազին՝ նշված երկու անձանց նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցավոր արարք կատարելու համար հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ, որը բավարարվել է, եւ նրանց ներկայացվել է մեղադրանք:

Վարույթն իրականացնող մարմինը միջնորդություններ է ներկայացրել դատարան՝ նրանց նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումն ընտրելու վերաբերյալ, որոնք եւս բավարարվել են:

Ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցառումներ՝ դեպքի բոլոր հանգամանքները պարզելու, 29-ամյա տղամարդուն հայտնաբերելու, վարույթն իրականացնող մարմին ներկայացնելու, ինչպես նաեւ նրա նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու հարցը լուծելու ուղղությամբ:

ԼՈՒՐԵՐ

ԾԵԾԿՌՏՈՒՔ՝ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Մարտի 25-ին՝ ժամը 23:46-ին, ոստիկանության Արաբկիրի բաժնում ստացվեց առաջին ահազանգը: Անհայտ քաղաքացին զանգել էր ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն եւ հայտնել, որ Սարմենի փողոցում ալկոհոլի ազդեցության տակ գտնվող հինգ հոգու միջեւ ծեծկռտուք է: Տեղյակ պահվեցին նաեւ մայրաքաղաքի կենտրոնում ծառայություն կատարող պարեկային կարգախմբերը:

Մինչ բաժնի օպերատիվ խումբը մեկնում էր դեպքի վայր, ստացվեց նույնաբովանդակ մեկ այլ ահազանգ: Քաղաքացին հայտնում էր, որ նույն տարածքում մի խումբ անձանց մասնակցությամբ ծեծկռտուք է: Առաջինը դեպքի վայր հասան Երեւանի պարեկները եւ, խուլիգանություն կատարելու կասկածանքով, Սարմենի փողոցում ձերբակալեցին ու ոստիկանության Արաբկիրի բաժին տեղափոխեցին չորս երիտասարդի, որոնցից երկուսը՝ Երեւանի, երկուսը՝ Նոր Հաճնի բնակիչ: 29-ամյա երեւանցու անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է գաղտնի փականով դանակ: Հանգամանքները պարզվում են:

ԱՊՕՐԻՆԻ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄ

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ եւս մեկ հայցադիմում ընդունվել է Հակակոռուպցիոն դատարանի վարույթ:

Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին «Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանց» ծրագրի «Տրանշ 1» եւ «Տրանշ 2» հատվածների կապալառու իսպանական «Կորսան Կորվիամ Կոնստրուկցիոն» ընկերության հայաստանյան մասնաճյուղի ենթակապալառու «Պոլի-Տրանսպորտ» ՍՊ ընկերության մասնակից Ս.Վ.-ից, հօգուտ Հայաստանի Հանրապետության, բռնագանձել մասնավորապես՝

- Վահագնի թաղամասում գտնվող 2 անշարժ գույք եւ 1 տրանսպորտային միջոց, իսկ անհնարինության դեպքում՝ դրանց

միջին շուկայական արժեքը, որն ընդհանուր կազմում է ավելի քան 316 մլն դրամ,

- շուրջ 1 մլրդ 21 մլն դրամ՝ որպես փոխառություն տրամադրված գումարի, օրինական եկամուտներով չհիմնավորվող բարեխիղճ երրորդ անձանց փոխանցված դրամի եւ ապօրինի եկամուտների մնացորդի հանրագումար:

ԼՈՒՐԵՐ

ՄԱՀԱՑԵԼ Է ՀԻՎԱՆԴԱՆՈՑՈՒՄ

Մարտի 27-ին՝ ժամը 06:22-ին, Արմավիրի մարզային ճգնաժամային կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Զվարթնոց գյուղի մոտակայքում տեղի է ունեցել ՃՏՊ, կա արգելափակված քաղաքացի. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր են մեկնել ՆԳՆ ՓԾ Երեւան քաղաքի եւ մարզային փրկարարական վարչությունների հրշեջ-փրկարարական ջոկատներից երկու մարտական հաշվարկ:

Պարզվել է, որ Էջմիածին-Երեւան ավտոճանապարհի 14-րդ կմ-ին Mercedes-Benz E350 մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի հատվածից եւ բախվել գոտվազդային վահանակին:

Փրկարարները հոսանքազրկել են ավտոմեքենան, փակել գազի բալոնի փականը, արգելափակումից դուրս բերել վարորդին եւ մոտեցրել շտապօգնության ավտոմեքենային. վերջինս հոսպիտալացվել է Էջմիածնի ԲԿ, որտեղ եւ մահացել է:

ԱՊՕՐԻՆԻ ԹՄՐԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի, տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաեւ հատուկ նշանակության գումարտակի ծառայողներն ամենօրյա ռեժիմով շարունակում են ապօրինի թմրաշրջանառության դեպքեր բացահայտել: Մարտի 21-ին ու 22-ին արձանագրվել է 20-ից ավելի բացահայտում: Մասնավորապես, Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի, ինչպես նաեւ Կենտրոնական, Էրեբունու, Քանաքեռ-Զեյթունի, Մաշտոցի, Նոր նորքի բաժինների, Ավանի եւ Մարաշի բաժանմունքների, ինչպես նաեւ Մետրոպոլիտենի պահպանության բաժնի ծառայողների միջոցառումների արդյունքում հայտնաբերվել են տարբեր քաշերով ու փաթեթներով հաշիշի, Մեթամֆետամինի եւ Մարիխուանայի նմանվող զանգվածներ ու նմանատիպ զանգվածներով կաթուցիչներ:

Ապօրինի թմրաշրջանառության դեմ պայքարը, որպես ՆԳՆ ոստիկանության գործունեության առաջնային ուղղություն, հետեւողականորեն շարունակվում է:

ԿԱՄԵՑՐԵԼ ԵՆ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ

Երեկ՝ ժամը 9:00-ի սահմաններում, Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումը փորձել է առաջխաղացում կատարել Ստեփանակերտ-Լիսագոր գրունտային ճանապարհի հարակից բարձունքներից մեկի ուղղությամբ:

Նշված հատվածում մարտական հերթապահություն իրականացնող ՊԲ զինծառայողների կանխարգելիչ գործողությունների շնորհիվ ադրբեջանական ստորաբաժանման առաջխաղացման փորձը կասեցվել է: Այս մասին հայտնում են Արցախի ՊՆ-ից:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 24-ից 27-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 140 դեպք, որոնցից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

7 ԲԱԺԻՆ ԿՐՃԱՏՎԵԼ Է

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը, մարտի 21-ին հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2023թ.-ի «Հայաստանի Հանրապետության մարզպետարանների աշխատակազմերի կանոնադրությունները հաստատելու մասին» թիվ 1550-Լ որոշումը եւ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի համապատասխան հանձնարարականը, որոշում է ընդունել դադարեցնել Տավուշի մարզպետարանի թվով 7 բաժինների գործունեությունը: Կրճատվել են մարզպետարանի հետեւալ բաժինները՝ ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժին, քաղաքաշինության վարչության տրանսպորտի եւ ճանապարհաշինության բաժին, գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության բնապահպանության բաժին, քարտուղարության վարչատնտեսական բաժին, ընտանիքի, կանանց եւ երեխաների իրավունքների պաշտպանության բաժին, տեղական ինքնակառավարման եւ հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժին, տեղական ինքնակառավարման եւ հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման եւ համայնքային ծառայության հարցերի բաժին: ՀՀ մարզպետարանների աշխատակազմը միշտ էլ եղել խիստ ուռճացած՝ հագեցած անհարկի հաստիքներով. վերոհիշյալ բաժինների կրճատումները պետք է վաղուց արվեին, ոչ թե Նիկոլ Փաշինյանի՝ վարչապետ ընտրվելուց գրեթե 5 տարի հետո: Տավուշի մարզպետարանի աշխատակազմի բաժինների գործունեության դադարեցումը էական ազդեցություն չի կարող ունենալ մարզպետարանի գործունեության վրա, քանի որ մարզպետարանը փաստացի կառավարում է մարզի ընդամենը երկու ոլորտ՝մարզի հանրակրթական դպրոցները եւ մարզի առողջապահական հիմնարկները, դրանք էլ՝համապատասխան նախարարությունների հետ համատեղ:

ՍՈՂԱՆՔԸ ՍՊԱՌՆՈՒՄ Է

Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղի կենտրոնում՝ Աղստեւ գետի աջ ափին, սողանքի մեծ գոտի է: Սողանքը քանդել է Դիլիջան-Իջեւան երկաթուղու մեծ հատված, դրա հետեւանքով այդտեղ փակվել է միջպետական ճանապարհը, եւ տարիներ շարունակ ավտոմեքենաների երթեւեկը կատարվում է Հաղարծին գյուղի մեջով ձգվող ճանապարհով: Գյուղի գետամերձ առանձնատների տերերին պետական բյուջեից դրամական փոխհատուցում է տրվել, եւ նրանք լքել են իրենց տները: Հաղարծին գյուղի բնակիչները հայտնում են, որ սողանքային գոտին ակտիվ է, սողանքի օջախի հարակից բլուրներում տնկված դոկորատիվ ծառեր, գյուղացիների պտղատու այգիներ կային, սակայն սողանքը տրոհել է այդ այգիները, բացել հողի կավե շերտը չորացրել պտղատու եւ եղեւնու ծառերը: Բնակիչները մտահոգություն ունեն, որ սողանքը մի օր փակելու է Աղստեւի հունը, հսկայական քարերը լցվելու են գետը կամ գետափին գտնվող գյուղացիների առանձնատները:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՅՑ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ ԵՆ 2022Թ.-Ի ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆՆԵՐԸ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն երեկ այցելել է Վիճակագրական կոմիտե կառույցի 2022թ. գործունեության հաշվետվությունը քննարկելու նպատակով:

Խորհրդակցությանը մասնակցել են փոխվարչապետեր Միհր Գրիգորյանը եւ Տիգրան Խաչատրյանը, Պետական վերահսկողական ծառայության ղեկավար Ռոմանոս Պետրոսյանը, Վիճակագրական կոմիտեի նախագահ Ստեփան Մնացականյանը, կոմիտեի ղեկավար կազմը, պաշտոնատար այլ անձինք:

Վարչապետին զեկուցվել է 2022թ. վիճակագրական ծրագրի կատարման մասին, որն իրականացվել է ամբողջությամբ. նախատեսված 472 միջոցառումը կատարվել է սահմանված ժամկետում: Տարածվել է 23 վիճակագրական ժողովածու, 67 տեղեկագիր, 24 տեղեկատվական ամսական զեկույց: Նշվել է, որ 2022թ. հոկտեմբերի 13-22-ը ՀՀ-ում անկախությունից ի վեր տեղի ունեցած 3-րդ մարդահամարն առաջին անգամ անց է կացվել համակցված մեթոդով:

Նախաձեռնվել են բարեփոխումներ վիճակագրական կարողությունների ամրապնդման ուղղությամբ: Մասնավորապես, միջազգային գործընկեր կառույցների օժանդակությամբ կազմվել են ռեսուրսներ-օգտագործում աղյուսակները, նոր մեթոդի կիրառմամբ մշակվել եւ հրապարակվել են ՀՆԱ-ի եռամսյակային ցուցանիշների սեզոնային ճշգրտված տվյալները, հրապարակվել է «Կանանց նկատմամբ ընտանեկան բռնության հետազոտության» զեկույց-հաշվետվությունը եւ այլն: Միջազգային վիճակագրական համագործակցության շրջանակում ծրագրեր են իրականացվել Եվրոպական միության, Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հետ: Շարունակվել է համագործակցությունը ինչպես վարչական ռեգիստր վարող պետական գերատեսչությունների եւ տեղական ինքնակառավարման մարմինների, այնպես էլ միջազգային աշխատանքային խմբերի հետ: ԵՄ մեթոդաբանության հիման վրա՝ աշխատանք է տարվել ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցման ուղղությամբ:

Արդիականացվել են Ազգային հաշվետվողականության հարթակի ցուցանիշները, ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների 30-ամյակի համատեքստում՝ իրազեկման միջոցառում է իրականացվել Միացյալ Թագավորության ազգային վիճակագրության գրասենյակի հետ համատեղ: Արդիականացվել է 139 վիճակագրական արտադրանքի որակի հռչակագիր, ԵՄ Միասնական ինտեգրված մեթատվյալների կառուցվածքը: Առաջիկայում նախատեսվում է նաեւ Վիճակագրական կոմիտեի կայքէջի արդիականացում:

Հաշվետվության վերաբերյալ ծավալվել է մտքերի փոխանակում: Վարչապետին մանրամասներ են ներկայացվել Վիճակագրության պետական խորհուրդի գործունեության, ոլորտում քաղաքականության մշակման եւ իրականացման, ինտեգրված պետական վարչական ռեգիստրների համակարգի ներդրման ուղղությամբ տարվող աշխատանքի վերաբերյալ: Քննարկման առարկա են դարձել առաջիկա անելիքները, այդ թվում՝ տեղեկությունների աղբյուրների ընդլայնման, ըստ որոշակի չափանիշների՝ գյուղացիական տնտեսությունների իրավական կարգավիճակի եւ դրա սահմանման բացակայության խնդրի կարգավորման, ռեսպոնդենտների հաշվետվողականությունը խթանող իրավակարգավորումների լավարկման եւ այլ ուղղություններով:

Վարչապետը կարեւորել է ոլորտի բարեփոխումները՝ միջազգային չափանիշներին համապատասխան ազգային վիճակագրական համակարգի զարգացման տեսանկյունից: Նիկոլ Փաշինյանը նշել է, որ անհրաժեշտ է ապահովել միջգերատեսչական տվյալների շտեմարանների շարունակական փոխգործելիություն՝ հիմք ունենալով հասանելիության իրավական կարգավորումները: Կառավարության ղեկավարը նաեւ կարեւորել է ոլորտում թվային գործիքակազմի լայն կիրառումը:

Քննարկման արդյունքներով՝ վարչապետը մի շարք հանձնարարականներ է տվել պատասխանատուներին:

ԿԱՆԽԵԼ ԵՆ

ԱՐՏԱՀԱՆՈՒՄ՝ ԿԵՂԾ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐՈՎ

ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության Գուգարքի տարածաշրջանային բաժնի եւ ԱԱԾ Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի բաժնի աշխատակիցների կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում տեղեկություններ էին ստացվել, որ ՀՀ-ում գործող կազմակերպության անվամբ սեփականատերը պատրաստվում է Հայաստանից Ռուսաստան արտահանել Սիգ ձկնատեսակի ձկնկիթ ապրանքները ոչ իրենց անվանմամբ հայտարարագրելու եղանակով: Այս մասին հայտնում է ՊԵԿ մամուլի ծառայությունը:

Ստացված օպերատիվ տեղեկությունների իսկությունը ստուգելու նպատակով ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության Գուգարքի տարածաշրջանային բաժնի աշխատակիցները մաքսային հսկողության են ենթարկել ՀՀ-ից ՌԴ արտահանվող, տարանցման հայտարարագրով հայտարարագրված 4520 կգ համաքաշով եւ 3840 կգ զտաքաշով Իշխան ձկնատեսակի հատիկավոր խավիարը: Արդյունքում բավարար կասկած է առաջացել, որ զգալի մասը հնարավոր է հանդիսանում Սիգ ձկնատեսակի հատիկավոր ձկնկիթ:

Իրականացված հսկողության արդյունքում պարզվել է, որ ընկերության կողմից հայտարարագրված 4520 կգ համաքաշով եւ 3840 կգ զտաքաշով Իշխան ձկնատեսակի կարմրավուն հատիկավոր ձկնկիթի փոխարեն փաստացի առկա է 4918 կգ համաքաշով եւ 4260 կգ զտաքաշով Սիգ ձկնատեսակի նմանվող դեղնավուն մանր հատիկավոր խավիար:

ՀՀ կառավարության թիվ 2002 որոշման համաձայն՝ սահմանվել է Հայաստանի տարածքից Սիգի ձկնկիթի արտահանման ժամանակավոր արգելք, ուստի հայտնաբերված Սիգ ձկնատեսակի նմանվող դեղնավուն մանր հատիկավոր ձկնկիթից վերցվել են փորձանմուշներ՝ դրանց իրական տեսակը պարզելու համար: Նշանակվել է դատակենդանաբանական փորձաքննություն:

Համաձայն փորձաքննության եզրակացության՝ հայտարարագրված ապրանքները չեն հանդիսացել Իշխան ձկնատեսակի, այլ սաղմոնների ընտանիքի՝ Սիգ տեսակի ձկնկիթ է եղել:

Փաստի առթիվ, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 316-րդ հոդվածի հատկանիշներով, կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն, իսկ կազմված նյութերը տրամադրվել են ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչություն հետագա ընթացքը որոշելու համար:

● Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 25 ՃՏՊ. 3 մարդ զոհվել է, 30-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ԳՆԱՃԸ ԿԱՋՄԵԼ Է 8%

Վիճակագրական կոմիտեն հրապարակել է ընթացիկ տարվա առաջին 2 ամսվա մակրոտնտեսական տվյալները:

Հունվար-փետրվարին արձանագրվել է տնտեսական ակտիվության ցուցանիշի 10.9 տոկոս աճ: Արտաքին առեւտրաշրջանառության ոլորտում աճը կազմել է 77.7 տոկոս, արտահանումն աճել է 96.4, իսկ ներմուծումը՝ 67.4 տոկոսով:

Ծառայությունների ծավալն աճել է 23.5, շինարարությունը՝ 13.2, առեւտրի շրջանառությունը՝ 18, արդյունաբերական արտադրանքի ծավալը՝ 1 տոկոսով: Անկում է գրանցել էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ 0.2 տոկոս, սպառողական գնաճը կազմել է 8.1, իսկ արդյունաբերական արտադրանքի գնաճը՝ 0.8 տոկոս:

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ՝ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ

Միջազգային գործընկերների աջակցությամբ ու համայնքային ծրագրերով այս տարի Երեւանում հիմանորոգումից հետո շահագործման կհանձնվի 22 մանկապարտեզ: Այս մասին նշվել է երեկ՝ մարտի 27-ին՝ քաղաքապետարանում կայացած խորհրդակցության ժամանակ: Քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության եւ բարեկարգման բաժնի պետ Կարեն Գրիգորյանը հայտնեց, որ 2023-ին Երեւանում 7 նոր մանկապարտեզի շինարարական աշխատանքներ կմեկնարկեն: Մասնավորապես, նոր մանկապարտեզներ կկառուցվեն Ավան, Արաբկիր, Նոր Նորք, Մալաթիա-Սեբաստիա, Շենգավիթ վարչական շրջաններում: Շինաբարեկարգման ծրագրերով ընթացքի մեջ են նաեւ այգիների բարեկարգման, պոլիկլինիկաների, կամրջային կառուցվածքների նորոգման աշխատանքները: Փոխքաղաքապետ Ավինյանը հանձնարարել է համայնքային բոլոր ծրագրերի նախագծերում, ինչպես նաեւ կառուցապատողներին տրվող շինթույլտվությունների ժամանակ պարտադիր պահանջ սահմանել հենաշարժողական խնդիրներ ունեցող քաղաքացիների համար հարմարավետ պայմանների ապահովումը: Այսուհետ ավարտական ակտերը տրամադրելուց առաջ հաշվի կառնվի նաեւ դենդրոնախագծերի լիարժեք իրագործումը:

19–ՐԴ ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆՈՒՄ

Երեւանն աշխարհի ամենաանվտանգ քաղաքների ցանկում զբաղեցրել է 19-րդ հորիզոնականը: Այս մասին է վկայում numbeo.com պորտալի վերլուծությունը: Ադրբեջանի մայրաքաղաք Բաքուն հայտնվել է 84-րդ տեղում, իսկ Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսին 43-րդ հորիզոնականում է: Աշխարհի ամենաանվտանգ քաղաք է ճանաչվել Աբու Դաբին (ԱՄԷ), 2-րդը Դոհան է (Կատար), իսկ լավագույն եռյակը եզրափակում է Այմանը (ԱՄԷ):

Լավագույն տասնյակում են նաեւ Թայբեյը, Թայվան (Չինաստան), Շարժան (ԱՄԷ), Դուբայը (ԱՄԷ), Քվեբեկ Սիթին (Կանադա), Բեռնը (Շվեյցարիա), Սան Սեբաստիանը (Իսպանիա) եւ Մյունխենը (Գերմանիա):

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

ԴԱՐՁԻ՛Ր ԲԻԶՆԵՍ ԱԿՈՒՄԲԻ ԱՆԴԱՄ

«Ակբա» բանկը գործընկերների հետ տարիների ոլորտմություն ունեցող գործարար հարաբերությունները տեղափոխում է նոր փուլ. Հայաստանում ձեռներեցության զարգացման, գործարար կապերի ստեղծման եւ գործակցության ավելի մեծ հնարավորությունների համար բանկը մեկնարկել է Acba Business Club-ը:

Բիզնես ակումբի առաջին հանդիպմանը համախմբվել է ավելի քան 600 գործարար, ովքեր միացել են Acba Business Club-ին միմյանց լսելու, փորձով կիսվելու եւ նոր կապեր ձեռք բերելու համար: Հայ գործարարների հետ հաջողությունների եւ անհաջողությունների սեփական փորձով կիսվել է նաեւ միջոցառման հատուկ հյուր, ABBYY ընկերության հիմնադիր Դավիթ Յանը, ով 2021-ին հայտնվել է ռուսական Forbes ամսագրի 200 ամենահարուստ մարդկանց ցուցակում: Դավիթ Յանը հայ գործարարների համար բանախոսել է «Ինչպե՞ս հաջողել բիզնեսում. նպատակասլացությո՞ւն, թե՞ համառություն» թեմայով:

«Հրաշալի է, որ Հայաստանում նման բիզնես ակումբ է ստեղծվել: Ինֆորմացիայի եւ գիտելիքի կրողները կիսվում են միմյանց հետ. մեկ համայնքում համախմբվում է ինտելեկտն ու իմաստությունը, մարդիկ գտնում են կապեր, մեկը մյուսին լսելով՝ նոր գաղափարներ են ծնվում: Ինչպես ընդունված է ասել, մենք հիմա ապրում ենք «պատմության դասագրքում»: Վերջին շաբաթների ընթացքում մարդկությունն անցավ անհնարին թվացող նոր սահման. հայտնվեց ChatGPT տեխնոլոգիան: Մենք մի քանի տարի հետո կարձանագրենք, որ 2022-23 թվականները մարդկության պատմության մեջ կմնան հեղափոխական եւ այս փոփոխությունները համեմատվում են ոչ թե ինտերնետի ստեղծման, այլ ավելի մեծ՝ գրերի գյուտի հետ: Կան փոփոխություններ, որ բիզնեսում պետք է անել հիմա»,- նշել է ABBYY ընկերության հիմնադիր, Band of Angels ներդրողների խմբի անդամ Դավիթ Յանը:

Acba Business Club-ի մեկնարկին կրկին ցանկանում եմ ընդգծել, որ բիզնես համայնքի հետ պատրաստ ենք շարունակել համագործակցությունը, լսել նրանց պահանջները եւ միասին զարգացնել բիզնես միջավայրը: Մենք ի սկզբանե մեր հաճախորդներին դիտարկել ենք գործընկերներ եւ այսօր էլ ցանկանում եմ «գործընկերներ» բառով բնորոշել Acba Business Club-ին միացած գործարարներին»,- նշել է «Ակբա» բանկի գլխավոր գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյանը:

«Acba Business Club-ը մեզ համար այն վայրն է, որտեղ կարողանալու ենք մեկտեղել մեր համախոհներին, լսել ու կիսվել գաղափարներով, ինչպես նաեւ մարդիկ կկարողանան գործարար կապեր ստեղծել: Հուսով ենք, որ այս հարթակը կծառայի բիզնեսներին: Մենք համոզված ենք ու վստահ, որ մարդկանց մոտիվացնելու ենք, որ իրենք կիսվեն իրենց փորձով, որը կօգնի փոքր բիզնեսին ավելի լավը դառնալ: Մենք համոզված ենք, որ միասին այս ամենն իրականություն ենք դարձնելու»,- նշել է «Ակբա» բանկի բիզնես գործառույթների համակարգման գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Արսեն Մելքոնյանը:

«Acba Business Club-ը համայնք է, որը հնարավորություն է տալու բիզնեսներին ավելի արագ զարգանալ: Բիզնես ակումբը համալրված է գործիքներով, որը բիզնեսներին հնարավորություն կտա դառնալ ավելի փորձառու եւ բանիմաց»,- նշել է «Ակբա» բանկի ՓՄՁ եւ գյուղատնտեսական պրոդուկտների պլանավորման եւ կառավարման բաժնի ղեկավար Սուրեն Հովհաննիսյանը:

Դառնալով Acba Business Club-ի անդամ՝ ընկերությունների ղեկավարները կմասնակցեն բազմաթիվ միջոցառումների, քննարկումների, կլսեն հրավիրված պրոֆեսիոնալ խոսնակների: Ստեղծվում է միջավայր՝ հայկական գործարար աշխարհը զարգացնելու համար:

Դարձի՛ր բիզնես ակումբի անդամ: «Ակբա» բանկը արդեն տասը տարի փոքր ու միջին ձեռնարկությունների համար իրականացնում է նաեւ անվճար բիզնես դասընթացներ, օգնում է ավելի գրագետ բիզնես վարել, ճիշտ որոշումներ կայացնել: Առաջիկա դասընթացներին ու միջոցառումներին, գործընկերների հատուկ առաջարկներին ծանոթանալ հնարավոր է sme.acba.am կայքում, որը թարմացվել է եւ համալրվել նոր գործիքներով ու բովանդակությամբ՝ դառնալով ուղեցույց գործարար աշխարհի համար:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- Կոտայքի մարզ, համայնք Հրազդան ք., Միքայելյան փողոց, 2/2 հասցեում գտնվող 96,95 ք.մ. բնակարան /գույքի կազմում առկա է 30,52 ք.մ. մակերեսով հասարակական նշանակության առեւտրի սրահ/: Լոտի մեկնարկային գինը՝ 19100000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 13.04.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 15.05.2023թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԱՆԿԱՆԱԿԱՐԳ

ՀԱՅՏՆԻ Է «ԱՐՏԱՎԱԶԴ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ

Հայաստանի թատերական գործիչների միությունը հրադարակել է այն աշխատանքների ցանկը, որոնք անցել են «Արտավազդ» թատերական մրցանակաբաշխության երկրորդ փուլ եւ մարտի 27-ին ղայֆարել են բաղձալի մրցանակի համար: «Լավագույն տղամարդ դերակատար» անվանակարգում ղայֆարել են Հ. Պափլանյանի անվան դրամատիկական թատրոն, Լեւոն Հախվերդյան, «Չուչել» /Խրտվիլակը / (Ռոման), Հ. Պարոնյանի անվան թատրոն, Իշխան Պարիբյան, «Քաջ Նազար» (Նազար), Պատանի հանդիսատեսի թատրոն, Արտաշես Շահվերդյան, «Կատուն շիկացած տանիքին» (Հարվի Փոլլիթ), Ս. Սարգսյանի անվան Համազգային թատրոն, Նարեկ Քաղդասարյան, «Խատուտիկի գինի» (Դագլաս Սփոլդինգ), «Վենեռան մուշտակով» (Թոմաս Նովաչեկ), «Գոյ» թատրոն, Սամվել Թոփալյան, «Լոնդոն BLUES» (Մաքիթ՝ Դաշույն Մաք), Կապանի Ա. Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոն, Արթուր Կարապետյան, «Ժայռ» (Գրիգոր աղա):

«Լավագույն կին դերակատար» անվանակարգում ներկայացված են եղել Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոն, Աննա Բալանդինա, «Բալենու այգին» (Ռան—սկայա), Պատանի հանդիսատեսի թատրոն, Սիրանուշ Լազյան, «Կատուն՝ շիկացած տանիքին» (Մարգրեթ Փոլլիթ/Մեգգի կատու), Ս. Սարգսյանի անվան Համազգային թատրոն, Նարինե Գրիգորյան, «Վենեռան մուշտակով» (Վանդա Ջորդան), Գյումրու Վ. Աճեմյանի անվան դրամատիկական թատրոն, Տաթեւ Ղազարյան, «Միզերի» (Էնին Ուիլքսն), Գորիսի Վ. Վաղարշյանի անվան դրամատիկական թատրոն, Սաթիկ Հախնազարյան, «Վերջին ծաղրածուն» (Ծաղրածու), Թեք տեղ թատրոն, Գայանե Բալյան, «Ուրիշի համար» (Սիրան): «Երկրորդ պլանի լավագույն տղամարդ դերակատար» անվանակարգում պայքարել են՝ Հ. Պարոնյանի անվան թատրոն, Սիփան Ջադոյան, «Քաջ Նազար» (Ռեսպան, սենեկապետ), Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոն, Կյաչեսլավ Շամիրյան, «Բալենու այգին» (Ֆիրս), Կապանի Ա. Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոն, Արթուր Գաբրիելյան, «Ժայռ» (Մատվեյ Եգորիչ), Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան հայկական թատրոն, Արթուր Գասպարյան, «Ռեւիզոր» (Քաղաքագլուխ):

«Երկրորդ պլանի լավագույն կին դերակատար» անվանակարգում ընդգրկվել են՝ Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոն, Լիլիա Մուկուչյան, «Վիոլ» (Պանոչկա, Վիուկ), Պատանի հանդիսատեսի թատրոն, Շուշան Ղազարյան, «Կատուն՝ շիկացած տանիքին» (Մեյ), Ս. Սարգսյանի անվան Համազգային թատրոն, Մարիա Սեյրանյան, «Երեք գույն. ծիրանագույն» (Մարիա), Վանաձորի Հ. Աբելյանի անվան դրամատիկական թատրոն, Քրիստինե Ալիխանյան, «Կույրերը» (1-ին կին՝Վեցերորդ կույր):

«Լավագույն սցենոգրաֆիա» անվանակարգում պայքարել են՝Գարեգին Եվանգուլյան, «Կոշկավոր կատուն», Հ. Պարոնյանի անվան թատրոն, «Կատուն՝ շիկացած տանիքին», Պատանի հանդիսատեսի թատրոն, Արթուր Հարությունյան, «Վիոլ», Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոն, Աղասի Մելքոնյան, «Ալիսի երազում», Մնջախաղի թատրոն, Ֆլորա Նախշքարյան, «Վիկինգները՝ հսկայի քարանձավում», Գյումրու երիտասարդական թատերախումբ:

«Լավագույն զգեստների նկարիչ» անվանակարգում ներկայացվել են՝ Հ. Պարոնյանի անվան թատրոն, Մարինա Թադեւոսյան, «Կոշկավոր կատուն», Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոն, Լուսինե Կարապետյան, «Վիոլ», Ս. Սարգսյանի անվան Համազգային թատրոն, Թամարա Բարոյան, «Խատուտիկի գինի», Մնջախաղի թատրոն, Աղասի Մելքոնյան, «Լեգենդի հետքերով»:

«Լավագույն լուսային նկարիչ» անվանակարգում ներկայացվել են՝ Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոն, Հայկ Աղաբեկյան, «Վիոլ», Հ. Թումանյանի անվան Տիկնիկային թատրոն, Արամ Աղաջանյան, «Լարովի նարինջ», Գյումրու Վ. Աճեմյանի անվան դրամատիկական թատրոն, Հակոբ Պողոսյան, «Սպասում», Վանաձորի Հ. Աբելյանի անվան դրամատիկական թատրոն, Աշոտ Գեւորգյան, «Կույրերը»:

«Լավագույն երաժշտության հեղինակ» անվանակարագում պայքարել են՝ Վահե Հայրապետյան, «Կոշկավոր կատուն», Հ. Պարոնյանի անվան թատրոն, «Անահիտ» - Թատրոն Կայարան, Նարեկ Կոսմոս, «Միզերի», Գյումրու Վ. Աճեմյանի անվան դրամատիկական թատրոն, «Բովանդակություն», Երեւանի թատրոնի եւ կինոյի ինստիտուտի եւ Գյումրու Վ. Աճեմյանի անվան թատրոնի հետ համատեղ նախագիծ:

«Լավագույն թատերախոսական» անվանակարգում պայքարել են՝Նունե Հախվերդյան, «Սերն ու չսերը», «Հրաշագործում», Նաիրա Շահվալադյան, «Արթնացրո՛ւ միտքդ, հետո էլ՝ հոգիդ», «Ուիլյամ Գիբսոնի «Հրաշագործը»՝ Նիկոլայ Ծատուրյանի բեմադրությամբ: «Լավագույն երիտասարդ դերասան» անվանակարգում ներկայացվել են՝ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոն, Ռազմիկ Մարուքյան, «Ռոմեո եւ Ջուլիետ» (Ռոմեո), Պատանի հանդիսատեսի թատրոն, Սեյրան Մովսիսյան, «Սիրելի Ելենա Սերգեեւնա» (Վոլոդյա), Հ. Թումանյանի անվան Տիկնիկային թատրոն, Սուրեն Թովմասյան, «Լարովի նարինջ» (Ալեք), «Գոյ» թատրոն, Էդգար Անդրեասյան, «Լոնդոն BLUES» (Կորիֆեյ): «Լավագույն երիտասարդ դերասանուհի» անվանակարգում պայքարել են՝ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոն, Անահիտ Վասիլյան, «Ռոմեո եւ Ջուլիետ» (Ջուլիետ), «Գոյ» թատրոն, Լիլիթ Բադանյան, «Լոնդոն BLUES» (Պոլի Փիչըմ), Գյումրու Վ. Աճեմյանի անվան դրամատիկական թատրոն, Ջեմմա Ադամյան, «Սպասում» (Կարոլին, Կին, Դայակ), Վանաձորի Հ. Աբելյանի անվան դրամատիկական թատրոն, Մարիամ Ղեւոնդյան, «Կույրերը» (Երիտասարդ կույր աղջիկ): «Լավագույն երիտասարդ բեմադրիչ» անվանակարգում ներկայացվել են՝ Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոն, Նորա Գրիգորյան, «Վիոլ», Պատանի հանդիսատեսի թատրոն, Յուրա Կիրակոսյան, «Չառլին եւ շոկոլադե գործարանը», Գյումրու երիտասարդական թատերախումբ, Արմեն Արշալույսյան, «Վիկինգները հսկայի քարանձավում», Վանաձորի Հ. Աբելյանի անվան դրամատիական թատրոն, Նարե Մարտիրոսյան, «Կույրերը»: «Լավագույն մանկական ներկայացում» անվանակարգում ընդգրկվել են՝ Հ. Պարոնյանի անվան թատրոն, «Կոշկավոր կատուն», բեմ.՝ Սամսոն Մովսեսյան, Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոն, «Արքայադուստր գորտը», բեմ.՝ Կարեն Ներսիսյան, Պատանի հանդիսատեսի թատրոն, «Չառլին եւ շոկոլադե գործարանը», բեմ.՝ Յուրա Կիրակոսյան, Հ. Թումանյանի անվան Տիկնիկային թատրոն, «Դետեկտիվ Ալենը», բեմ.՝Սամսոն Մովսեսյան, Մնջախաղի թատրոն, «Ալիսի երազում», բեմ.՝Մերի Կիրակոսյան, Արտաշատի Ա. Խարազյանի անվան դրամատիկական թատրոն, «Բարեկենդանը», բեմ.՝Կարեն Խաչատրյան: «Լավագույն երիտասարդական ներկայացում» անվանակարգում պայքարել են Պատանի հանդիսատեսի թատրոն, «Սիրելի՛ Ելենա Սերգեեւնա», բեմ.՝Շուշան Ղազարյան, Ս. Սարգսյանի անվան Համազգային թատրոն, «Պյերետայի քողը», բեմ.՝Յուրի Կոստանյան, Երեւանի թատրոնի եւ կինոյի ինստիտուտի եւ Գյումրու Վ. Աճեմյանի անվան թատրոնի հետ համատեղ նախագիծ «Բովանդակություն», բեմ.՝Գոռ Մարգարյան, «Մետրո» թատրոն, «Տրավիատա կրկեսը», բեմ.՝Սոնա Մարտիրոսյան:

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐ՝ ՊԱՏՄԱԿԱՆ ԴՎԻՆՈՒՄ

ՀՀ Արարատի մարզի Հնաբերդ գյուղի պատմական «Դվին մայրաքաղաքի» տարածքում իրականացվում են պեղման աշխատանքներ: Ինչպես տեղեկանում ենք ԿԳՄՍ նախարարության տարածած հաղորդագրությունից, Համաշխարհային բանկի վարկային ծրագրով Զբոսաշրջության կոմիտեն եւ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը նախատեսում են 2023-2024թթ. հնավայրի հարակից տարածքում թանգարանի եւ հնագիտական հանգրվանի կառուցում: Նախատեսվող թանգարանի տարածքը ստուգելու նպատակով էլ ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատվերով մեկնարկել է «Մայրաքաղաք Դվին» պատմամշակութային արգելոց-թանգարանի այդ հատվածի հետախուզական պեղումների 2 փուլը: «Դվին մայրաքաղաքի» ընթացիկ եւ ստուգողական պեղումներն իրականացնում է Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի արշավախումբը, արշավախմբի ղեկավարն է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Պետրոսյանը: 2023 թ. պեղումները նախատեսվում է իրականացնել մարտ-ապրիլ ամիսներին:

ԼՈՒՐԵՐ

ՉԵՆ ՄԱՍՆԱԿՑԻ ԽԱՂԻՆ

Լուկաս Սելարայանը, Նորբերտո Բրիասկո-Բալեկյանը եւ Էդգար Բաբայանը, համաձայն նախնական պայմանավորվածության, վերադարձել են իրենց ակումբներ եւ չեն մասնակցի Հայաստան- Կիպրոս հանդիպմանը:

Հավաքականի ճամբարը վնասվածքի պատճառով լքել է նաեւ Անդրե Չալոշըրը: Տարոն Ոսկանյանի վնասվածքը շատ լուրջ չէ: Ազգային հավաքականի կենտրոնական պաշտպանի մոտ ախտորոշվել է ձախ սրունք-թաթային հոդի եւ նրբոլոքի վնասվածք: Բուժումն ու վերականգնումը կտեւի մոտ 20 օր: Հրանտ-Լեոն Ռանոսը կարող է իր նորամուտը նշել Կիպրոսի հավաքականի դեմ խաղում: Այս մասին ասված է հավաքականի տարածած հայտարարությունում:

ՎԱՃԱՌՈՒՄ Է ԱՌԱՆՁՆԱՏՈՒՆԸ

Լեգենդար փոփ-դիվա Շերը 75 միլիոն դոլարով վաճառքի է հանել Մալիբուում գտնվող իր սիրելի առանձնատունը:

Վենետիկյան ոճով տունը գտնվում է ժայռի գագաթին եւ այցելուներին դիմավորում է արմավենու անտառով ու խաղաղ օվկիանոսի տեսարաններով: Բարձր եւ կանաչապատ պատերի հետեւում 1200 քմ մակերեսով Վերածննդի դարաշրջանի եռահարկ առանձնատունն է՝ հսկայական լողավազանով ու թենիսի կորտով, որը գտնվում է 1,7 ակր հողատարածքի վրա:

Առանձնատունն ունի յոթ ննջասենյակ, մարզասրահ եւ թատրոն: Կա նաեւ մեդիտացիայի սենյակ ու երկու հանդերձարան: Կա նաեւ թուրքական համամի օրինակով սանհանգույց՝ փայտե էկրաններով:

Տան ամենաարտասովոր հատվածը կլիմատ քոնթրոլով վերահսկվող կեղծամների սենյակն է, որտեղ պահվում են փոփ աստվածուհու 100 կեղծամները:

Շերը տանն ապրել է ավելի քան 30 տարի եւ վայելում է դրա ստեղծման ու էվոլյուցիայի յուրաքանչյուր պահը, բայց ասում է, որ ժամանակն է փոխանցել իր կախարդանքն ուրիշներին:

ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է «ՌԵԱԼ»

Ֆրանսիացի Զինեդին Զիդանը պատրաստ է ամռանը դարձյալ գլխավորել Մադրիդի «Ռեալը»՝ փոխարինելով իտալացի Կառլո Անչելոտիին:

Զիդանը երկու պահանջ է ներկայացրել Արքայական ակումբի ղեկավարությանը՝ մարզչական շտաբում ընդգրկել ֆիզպատրաստության մարզիչ Գրեգորի Դյուպոնին, չվաճառել բելգիացի կիսապաշտպան Էդեն Ազարին:

50-ամյա Զիդանը «Ռեալը» գլխավորել է 2016-2018-ին եւ 2019-2021-ին: Զիդանի ղեկավարությամբ Արքայական թիմը երեք անգամ նվաճել է Չեմպիոնների լիգայի գավաթը (2016, 2017, 2018):

● Մարտի 29-ին Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Ծննդյան վկայական» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-6000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԱՎԱՆԴՆԵՐ

ՀԱՐՑ. Ավանդի փոխհատուցում ստանալու համար ավանդատուն հաշվառման համար ի՞նչ փաստաթղթեր է ներկայացնում սոցիալական աջակցության տարածքային գործակալություն:

Սեդա Սեդրակյան (64 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը՝ անձը հաստատող փաստաթուղթ կամ նույնականացման քարտ, ավանդատուի հանրային ծառայությունների համարանիշը կամ սոցիալական ապահովության քարտը կամ տեղեկանք հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին, ավանդատուի խնայողական գրքույկը, ինչպես նաեւ դրա լուսապատճենը՝գրքույկի առաջին էջի (ներառում է մասնաճյուղի համարը, բաժանմունքի գտնվելու վայրը, հաշվեհամարը, ավանդատուի անունը, ազգանունը, հայրանունը, մասնաճյուղի կնիքը եւ պաշտոնատար անձի ստորագրությունը) եւ 1993թ. հունիսի 10-ի դրությամբ մնացորդի էջերի մասով, տեղեկանք «ՎՏԲ-Հայաստան» փակ բաժնետիրական ընկերությունից՝ ավանդատուի բանկային հաշվի քարտում 1993թ. հունիսի 10-ի դրությամբ առկա տվյալների մասին: Ըստ անհրաժեշտության՝ ներկայացվում է նաեւ՝

☺ ամուսնության վկայական կամ տեղեկանք քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնից՝ ամուսնության գրանցման մասին, եթե դիմողը ներկայացնում է ավանդատուի մահացած ամուսնուն պատկանող խնայողական գրքույկը, ինչպես նաեւ ամուսնու մահվան վկայականը, դրանց լուսապատճենները,

☺ ավանդատուի անունը եւ ազգանունը փոխելու մասին քաղաքացիական կացության ակտերի գրանցման կենտրոնի տված փոխման վկայականը, եթե անձնագրում եւ խնայողական գրքույկում նշված անունը, ազգանունը տարբեր են, իսկ ուղղելու դեպքում՝ ուղղման տեղեկանքը եւ դրանց լուսապատճենները,

☺ Հայաստանի պաշտպանության մարտական գործողությունների մասնակցի վկայականը եւ դրա լուսապատճենը,

☺ նոտարի կողմից տրամադրված՝ զոհվածի անունով մինչեւ 1993թ. հունիսի 10-ը ներդրված ավանդի ժառանգության իրավունքի վկայագիր, ՀՀ ՊՆ-ի կողմից տրված՝զոհվածի կարգավիճակը հաստատող տեղեկանք, զոհվածի մահվան վկայական եւ դրանց լուսապատճենները,

☺ տեղեկանք զինկոմիսարիատից՝2014թ. օգոստոսի 1-ի դրությամբ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվելու վերաբերյալ:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Փաստաթղթերի ցանկը պարզ ներկայացված է. մնում է դասակարգել փաստաթղթերն ու ներկայանալ սոցիալական գործակալություն:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՕՐԵՆՔ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչ խոչընդոտներ կարող են լինել կուսակցություն գրանցելիս:

Հովհաննես Համբարձումյան (52 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հ. Հարությունյանի հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ կուսակցության իրավունակությունը, այսինքն՝ իրավունքներ ունենալու եւ պարտականություններ կրելու ունակությունը, ծագում է պետական գրանցման պահից, հետեւաբար միայն պետական գրանցումից հետո կուսակցությունը կարող է ունենալ կուսակցություններին հատուկ իրավունքներ եւ կրել պարտականություններ, օրինակ՝ մասնակցել ընտրություններին:

«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենք

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ կուսակցությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կամավոր միավորում է, որի նպատակը հանրաքվեներին, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու եւ հասարակության ու պետության քաղաքական կյանքին մասնակցության այլ ձեւերով ժողովրդի քաղաքական կամքի ձեւավորմանն ու արտահայտմանը նպաստելն է: Կուսակցությունը ձեւավորվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նախաձեռնությամբ՝ հիմնադիր համագումարի որոշմամբ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

2018 թվականին տեղի ունեցած հեղափոխությունից հետո իշխանությունները մշտապես խոսում էին զբոսաշրջության զարգացման մասին, սակայն, օրինակ, Կասկադ այցելելիս ականատես ենք լինում մի իրավիճակի, որը, մեղմ ասած, տհաճ է: Խոսքը մաքրության մասին է. Կասկադը համարվում է զբոսաշրջային վայրերից մեկը, եւ գոնե պետք է ապահովվի տարրական մաքրությունը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

	Ծիրակ	- 3 + 2 +12 + 16
	Կոտայքի լեռներ	-1 + 2 +12 + 15
	Կոտայքի նախալեռներ	+ 3 + 5 +15 + 18
	Գեղարքունիք	- 1 + 3 +12 + 15
	Լոռի	- 1 + 4 +16 + 19
	Տավուշ	+ 2 + 6 +19 + 21
	Արագածոտնի լեռներ	- 2 + 1 +12 + 14
	Արագածոտնի նախալեռներ	+ 3 + 6 +16 + 19

	Արարատ	+ 6 + 8 +19 + 22
	Արմավիր	+ 5 + 8 +19 + 21
	Վայոց ձորի լեռներ	+ 1 + 3 +10 + 13
	Վայոց ձորի նախալեռներ	+ 6 + 9 +18 + 21
	Սյունիքի հովիտներ	+ 8 + 13 +20 + 23
	Սյունիքի նախալեռներ	+ 3 + 6 +14 + 18
	Արցախ	+ 7 + 11 +20 + 24
	Երեւան	+ 5 + 7 +19 + 21

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **27.03.2023**
Հասցեն՝ Գերաքրքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*